ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության փորձագետ Միքայել Կոստանյան

Ես՝ Միքայել Կոստանյանս, 2025 թվականի ապրիլի 18-ի N 36 պայմանագրի համաձայն որպես փորձագետ աշխատում եմ ՀՀ Ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչությունում:

2025 թվականի ապրիլի 18-ից մինչև 2025 թվականի հուլիսի 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ Ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչությունում կազմակերպել եմ դասընթաց՝ կապված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու մասին, որտեղ ներկայացրել եմ նաև իմ հետագա քայլերը տվյալ վարչությունում:
2. Հարցազրույցների միջոցով հավաքագրել եմ բյուջետային գործընթացի համակարգման վարչության ՝ հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման և բյուջետային գործընթացի կամակերպման և համակարգման բաժինների բիզնես գործընթացները:
3. Մասնակցել եմ 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենքում վերաբաշխումների, փոփոխությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323 որոշման մեջ փոփոխությունների հետ կապված վերլուծական աշխատանքներին, կատարելով տվյալների մշակման աշխատանքներ և մանսակցել եմ տարբեր ցուցանիշների հաշվարկման աշխատանքներին:
4. Ձևավորել եմ տվյալների շտեմարանի կառուցվածքը:
5. Ուսումնասիրելով մեթոդական ցուցումներով հաստատված ծախսերի բաժնի՝ կառավարման ապարատի ձևաչափը, տվյալների շտեմարանում իրականացրել եմ տվյալների վերաբերյալ հավաքագրման աշխատանքներ:

ՀՀ ֆինանսների նախարարության
բյուջետային գործընթացի համակարգման վարչության փորձագետ
Միքայել Կոստանյան

18.07.2025թ.